FRIEDRICH EBERT STIFTUNG
Yerevan

PERSPECTIVE

ԿԱՐՃԱՄՏՈՒԹՅՈՒՆ

«շուկան է որոշում, թե ի՞նչն է նորարարություն»

ԱՆԴՐԱ ԳԵՐԲԵՐ, ՄԱՐԿՈՒՍ ՇՌԱՅԵՐ

Մարտ, 2018

- Սխալվում է նա, ով կարծում է, թե նորարարությունն առաջանում է միայն մասնավոր ձեռնարկությունների և ազատ շուկայի ուժերի միջոցով, իսկ պետությունն ավելի շուտ խանգարում է: Հակառակն է ճիշտ. երբ և որտեղ էլ նոր, հեղափոխական տեխնոլոգիաները հանգեցրել են տնտեսական վերելքի և բարեկեցության, դրանում պետությունը վճռորոշ նշանակություն է ունեցել:

- Երբ և որտեղ էլ որ նոր, հեղափոխական տեխնոլոգիաները հանգեցրել են տնտեսական վերելքի և բարեկեցության, դրանում պետությունը վճռորոշ նշանակություն է ունեցել: Ի տարբերություն մասնավոր ձեռնարկությունների պետությունն ի վիճակի է մեծ տեխնոլոգիական և տնտեսական անորոշության պայմաններում մեծ ռիսկերի դիմել և երկարաժամկետ ֆինանսավորումներ տրամադրել նորարարական գործընթացների համար:

- Տեխնիկական առաջընթացը «երկնքից թափվող մանանա» չէ: Ամենից առաջ այն նոր ռեալ կապիտալում, մարդկային կապիտալում և հետազոտությունների և զարգացման (F&E) համար կապիտալում կատարվող ներդրումների արդյունք է:

Հանրային քննարկումների ժամանակ անընդհատ պնդում են, թե միմիայն մասնավոր ձեռնարկություններն են առաջացնում նորարարություն և աճ: Ամենից առաջ ավտոտնակներում աշխատող արհեստավորները, գյուտարարները և փոքր, երիտասարդ ձեռներեցները հաճախակի նկարագրվում են որպես հատկապես ստեղծագործ, դինամիկ, ռիսկի պատրաստ և կանխատես: Ասում են, որ նրանք են ռիսկային կապիտալ մասնավոր ներդրողների հետ միասին առաջ մղում տնտեսությունը: Իսկ պետությունը, դրան հակառակ, հաճախ բնութագրվում է որպես չափազանց իներտ, թուլակամ, երևակայությունից զուրկ և նորարարություն իրականացնելու ունակություն չունեցող: Քանի որ պետությունը, ինչպես պնդում են, ավելի շուտ խանգարում է նորարական և աճի գործընթացներին, նրան անհրաժեշտ է հնարավորինս հետ մղել և նրա մասնակցությունը նվազեցնել: Եվ պետությունը պետք է հնարավորինս հրաժարվի կարգավորելուց, շուկային միջամտելուց և բարձրացված հարկերից ու միմիայն սահմանի ընդհանուր շրջանակային պայմաններ և կիրառի ճիշտ խթաններ, որոնց հիման վրա մասնավոր սեկտորը կկարողանա ծաղկել և կհաջողվի դինամիկ տնտեսական զարգացում: Արդյո՞ք սա իսկապես հիմնավոր փաստարկում է:

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՑՔՆ Է

Ճիշտ է այն, որ նորարարությունը ժողովրդական տնտեսությունների երկարաժամկետ աճի և բարեկեցության զարգացման կենտրոնական աղբյուրն է: Այն բարձրացնում է արտադրության «աշխատանք» ու «կապիտալ» գործոնների արտադրողականությունը, արթնացնում և բավարարում սպառողների կարիքները և այնպես է նպաստում դրան, որ մասնավոր ձեռնարկությունների համար պահպանվում են ներդրումներ անելու խթանները, և ժողովրդական տնտեսությունում չեն ցամաքում աճը խթանող ուժերը: Ընդ որում նորարարությունը կարող է ունենալ դրսևորման տարբեր ձևեր: Կարելի է տարբերակում կատարել, օրինակ, գործընթացների հետ կապված նորարարություններ (նոր արտադրական գործընթացներ) մի կողմից և արտադրանքի հետ կապված նորարարություններ (նոր արտադրանք) մյուս կողմից կամ նաև աճի հետ կապված նորարարություններ (արդեն գոյություն ունեցող արտադրանքի փոքր բարելավումներ) և արմատական նորարարություններ (ամբողջովին նոր արտադրանք):

Ժողովրդական տնտեսությունների երկարաժամկետ աճի գործընթացի տեսանկյունից ակնառու դեր են խաղում առաջին հերթին քայքայիչ, ինչպես նաև նոր, հեղափոխական տեխնոլոգիաները (այսպես կոչված բազիսային նորարարություններ, վճռորոշ տեխնոլոգիաներ կամ նաև General Purpose Technologies): Սովորաբար դրանց վերագրվում է ժողովրդական տնտեսությունների տնտեսական ու հասարակական զարգացումը երկար ժամանակով վճռոշոր կերպով կերտելու ունակություն: Իրենց հետ բերելով տնտեսությունում և հասարակությունում արտադրանքի և սպառողական նմուշների հիմնարար կերպափոխություն՝ դրանք առաջացնում են խորը կառուցվածքային փոփոխություններ: Քանի որ դրանք ոչ միայն նոր ձեռնարկությունների և ճյուղերի առաջացման են հանգեցնում, այլ նաև երիտասարդացնում են հին ձեռնարկությունները և ճյուղերը, դրանք կարող են ժողովրդական տնտեսություններում առաջ բերել մակրոտնտեսական արտադրողականության և տնտեսության աճի բազմապլանային ու երկարատև արագացում:

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԱՆՈՒՄ Է ՈՉ ՄԻԱՅՆ ԱՋԱՏ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՇՆՈՐՀԻՎ

Տեխնիկական առաջընթացը «երկնքից թափվող մանանա» չէ: Ամենից առաջ այն նոր հիմնական կապիտալում, մարդկային կապիտալում և հետազոտությունների և զարգացման (F&E) համար կապիտալում կատարվող ներդրումների արդյունք է: Դրանում կարևոր դեր են խաղում մասնավոր ձեռնարկությունները: Առաջամարտիկ ձեռնարկությունները, որպես կանոն, մշակում են նորարարություններ և ներմուծում դրանք շուկա՝

մրցույթում (ժամանակավոր) մենաշնորհային դիրք ձեռք բերելու, ուրիշ ձեռնարկություններին շուկայից դուրս մղելու և հավելյալ շահույթ ստանալու համար: Սույնով նրանք կարևոր դերակատարներ են, որոնք ժողովրդական տնտեսությունում առաջ են մղում ստեղծարար քայքայման շումպետերյան գործընթացը: Այնուամենայնիվ կարծամտություն է ենթադրելը, որ ազատ շուկայական ուժերի շնորհիվ միայն մասնավոր ձեռնարկություններն են ռիսկային կապիտալ ներդրողների հետ միասին զարգացնում նոր տեխնոլոգիաներ, իսկ որ պետությունը կարևոր դեր չի խաղում նորարարական գործընթացներում:

Բանն այն է, որ ավելի մանրամասն դիտետարկելիս արձանագրում ես, որ նոր ուղիներ հարթող նորարարություններից մեծ մասի դեպքում, որոնք հանգեցրել են տեխնոլոգիական հեղափոխությունների և այդպիսով մշտապես փոփոխությունների ենթարկել ու առաջ մղել կապիտալիզմը, պետությունն իր մասնակցությունն է ունեցել: Անցած տասնամյակներում, օրինակ, այդպես է եղել համակարգչի ու համացանցի հարցում, կենսա- ու նանոտեխոնոլոգիաների կամ նաև վերականգնողական էներգիաների դեպքում: Կարևոր բազիսային նարարությունները, որոնց վրա այսօր հիմնված են թվայնացումը կամ նաև տնտեսության ու հասարակության էկոլոգիական և կայուն կերպափոխությունը, առաջացել են ոչ այն պատճառով, որ մասնավոր ձեռնարկությունները և ռիսկային կապիտալ ներդրողները շուտ և ինքնուրույնաբար հասկացել են այդ նոր տեխնոլոգիաների ներուժը և դրանցում ներդրումներ կատարել: Դրանք իրենց գոյության համար ավելի շատ պարտական են պետության՝ տեխնոլոգիական զարգացման նոր արահետներ (հետագծեր) բացելու և դրանց իրականացումն ակտիվորեն խթանելու տեսլականին և պատրաստակամությանը՝ հակառակ բոլոր դժվարություններին ու անվստահություններին:

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԸ ԿՐՈՂ ԿԱՐԵՎՈՐ ԴԵՐԱԿԱՏԱՐ ՈՒ ՆԵՐԴՐՈՂ Է

Նոր, հեղափոխական տեխնոլոգիաների զարգացման գործում պետության առանցքային դերի պատճառն այն է, որ ի տարբերություն մասնավոր ձեռնարկությունների՝ պետությունն ի վիճակի է մեծ տեխնոլոգիական և տնտեսական անորոշության իրադրությունում դիմելու մեծ ռիսկերի և տրամադրելու խոշոր ռիսկերի հետ կապված, բայց նաև երկարաժամկետ ֆինանսավորումներ նորարարական գործընթացների համար: Ի տարբերություն վերջինիս՝ ներդրումների մասին ռիսկային կապիտալի մասնավոր ներդրողների որոշումները շատ ավելի կարճաժամկետ և մտազնական (սպեկուլյատիվ) բնույթ ունեն, ինչը խոչընդոտում է նոր, արմատական տեխնոլոգիաների զարգացման երկարաժամկետ գործընթացների հաջող ավարտը: Այսպիսով՝ մասնավոր ձեռնարկությունները և ռիսկային կապիտալ ներդրողներն այնքան էլ չեն սիրում ռիսկերի դիմել, ինչպես հաճախ պնդում են: Ի տարբերություն պետությանը՝ նրանք մեծ մասամբ շատ ավելի ուշ են մտնում խաղի մեջ, մասնավորապես՝ միայն այն բանից հետո, երբ պետությունը ֆինանսավորած է լինում տեխնոլոգիական զարգացման գործընթացների ամենառիսկային և կապիտալատար հատվածները:

Այդ իսկ պատճառով, ավելի մանրամասն դիտարկելիս, պարզվում է, որ այսօր մեծ համբավ վայելող արտադրանքի նորարարություններից շատերը հիմնված են պետության կողմից ֆինանսավորված հաջող նորարարությունների վրա: Այսպես, օրինակ, Apple-ի համաշխարհային հաջողությունը iPhone-ով հիմնված է մի շարք նոր տեխնոլոգիաների վրա (համացանց, GPS, Touchscreen, SIRI ևն), որոնք մշակվել և ֆինանսական աջակցություն են ստացել պետական իշխանության մարմինների կողմից: Նաև կենսատեխնոլոգիայի, նանոտեխնոլոգիայի կամ նաև վերականգնողական էներգիայի ոլորտներում աշխատող բազմաթիվ ձեռնարկությունների նորարարությունների և

աճի հետ կապված հաջողությունների հիմքում ընկած է նոր տեխնոլոգիական գիտելիքը, որը ձևավորվել է ոչ թե մասնավորների, այլ պետության կողմից ֆինանսավորվող հետազոտությունների արդյունքում: Ընդ որում՝ պետության ներդրումները հաճախակի չեն սահմանափակվում սոսկ ֆունդամենտալ հետազատությունները խթանելով, այլ տարածվում են ամբողջ նորարարական շղթայի երկայնքով՝ կիրառական հետազոտությունների խթանումից մինչև ռիսկային մասնավոր (տեխնոլոգիական) ձեռնարկությունների ֆինանասական աջակցությունը դրանց վաղ ստարտային փուլում:

ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԽԹԱՆԵԼ ՓՈՐՁԱՌԱՐԱԿԱՆ, ՈՐՈՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

Նորարարական գործընթացներում պետության հատուկ դերի ընդգծումը չի նշանակում պնդել, թե նա միշտ ավելի տեղեկացված է, քան մասնավոր սեկտորը և մշտապես նախօրոք կարող է ճիշտ գնահատել, թե ի վերջո որ կոնկրետ տեխնոլոգիաները հաջողություն կունենան: Բայց պետությունը կարող է ու պարտավոր է նպաստել այն բանին, որ որպես կանոն մեծ անորոշությամբ բնորոշվող, կումուլատիվ և կոլեկտիվ եղանակով իրականացվող փորձառարական, որոնումների և սովորելու գործընթացները հաջող ընթանան, օրինակ՝ ստեղծելով և համակարգելով բազմապլանային նորարարական համակարգ (տարասեռ, մասնավոր և հանրային հետազոտական հաստատություններից, ձեռնարկություններից և ուրիշ դերակատարներից կազմված դինամիկ ցանց), հանրային տնտեսությունների կամ ներդրումային և խթանող պետական բանկերի միջոցով «համբերատար» կապիտալ տրամադրելով և կարգավորումների ու գնումների շրջահայաց քաղաքականության միջոցով ուժեղացնելով նորարարությունների պահանջարկը և դիֆուզիան:

Սակայն պետությունը պետք է ձեռնպահ մնա հարկային արտոնություններ տրամադրելուց, որովհետև հարկերի իջեցման դեպքում, լինի դա կապիտալից ստացվող շահույթի համար, թե հետազոտությունների և զարգացման ծախսերի նվազեցման նպատակով, սխալմամբ միշտ ենթադրվում է, որ տնտեսության դերակատարները ցանկանում են և ի վիճակի են ներդրումներ կատարել: Սակայն նոր, հեղափոխական տեխնոլոգիաների դեպքում դա հնարավոր է միմիայն այն դեպքում, եթե պետությունն է առջևից գնում և իր վրա վերցնում սկզբնական մեծ ռիսկը: Ռիսկային կապիտալի մասնավոր ներդրողները հաճախակի զուրկ են ոչ թե բավարար ֆինանսական միջոցներից, այլ քաջությունից և համբերությունից, որոնք անհրաժեշտ են անորոշ տեխնոլոգիական զարգացման գործընթացները գլխավորելու համար: Նման իրադրությունում իջեցված հարկերը որևէ ազդեցություն չեն ունենում ձեռնարկության շահույթի վրա, դրանք պարզապես ծանրաբեռնում են պետական բյուջեն: Ու դրանից հետո պետությունը զուրկ է լինում ճիշտ այն ռեսուրսներից, որոնք նրան հարկավոր են նոր տեխնոլոգիաների և նոր շուկաների զարգացումը խթանելու համար:

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԲԱԺԻՆ ՈՒՆԵՆԱ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ

Այսպիսով՝ ընդհանուր առմամբ պետությունը բնավ էլ արգելակող կաղապար չէ, այլ հակառակը, նորարարական գործընթացի կարևոր տանող անիվ: Ամենից առաջ, եթե գործ ունենք նոր տեխնոլոգիական և հասարակական մարտահրավերների հետ, որոնց հաղթահարումը պահանջում է տնտեսության ու հասարակության բազմապլանային կերպափոխություն, ապա ցանկալի է, որ պետությունը չսահմանափակվի ընդհանուր շրջանակային պայմաններ սահմանելով և պայքարելով շուկայական համակարգի խաթարման դեմ: Հակառակը՝ անհրաժեշտ է ունենալ ակտիվ, հեռատես և նախաձեռնող պետություն, որը պատրաստ և ի վիճակի է հանրային ներդրումային քաղաքականության իրականացման ընթացքում նոր ուղղություն տալ տեխնոլոգիական զարգացման գործընթացին ու դրանով նաև ժողովրդական տնտեսության աճի արահետին:

Սակայն որպեսզի պետությունը կարողանա կատարել ռիսկեր կրող և կարևոր դերակատարի և ներդրողի իր առանցքային դերը, անհրաժեշտ է չթույլատրել, որ հարկերով ֆինանսավորվող նորարարությունների ռիսկերն ու ծախսերը սոցիալականացվեն, այսինքն՝ հանրությունը կրի դրանք, մինչ հասույթներն ու շահույթը կմասնավորեցվեն, ուրեմն՝ կհասնեն միայն քչերին: Ժամանակակից հարկային համակարգը չի ապահովում գերազանցապես պետական ներդրումների շնորհիվ կատարված նորարարություններից առաջացած շահույթի մի պատշաճ մասի վերադարձը պետությանը: Այդ իսկ պատճառով հարկային համակարգն անհրաժեշտ է վերանայել ու նոր ուղիներ գտնել, որպեսզի պետական բյուջեն ապագայում նորից ավելի շատ հասույթներ ունենա (օրինակ՝ պատենտային իրավունքների կամ ձեռնարկություններում բաժիններ ունենալու միջոցով): Միայն այդպես պետությունը կկարողանա կատարել իր ձևակերտող դերը և արդյունավետ կերպով դիմակայել արդի հասարակական մարտահրավերներին, օրինակ՝ կլիմայական փոփոխություններին կամ դեմոգրաֆիական ծերացմանը: Միայն այդպես կարող է հաջողվել խելամիտ և նորարարություններով խթանվող, բայց նաև համապարփակ ու տևական աճ:

Հեղինակների մասին

Դոկտոր Անդրա Գերբերը Ֆրիդրիխ Էբերտի անվան հիմնադրամի տնտեսական և սոցիալական քաղաքականության բաժնի ղեկավարն է:

Մարկուս Շռայերը Ֆրիդրիխ Էբերտի անվան հիմնադրամի տնտեսական և սոցիալական քաղաքականության բաժնի փորձագետ է:

Հրապարակողի մասին

Ֆրիդրիխ Էբերտ Հիմանադրամ / Հայաստանյան գրասենյակ
Մոսկովյան փողոց 31 / 0002 Երեւան

Պատասխանատու՝
Ֆելիքս Հեթթ
Տարածաշրջանային համակարգող
Հեռ՝ +374 10 53 69 13
http://www.fes-caucasus.org/

Հրապարակումները պատվիրել՝
info@fes.am

Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամի հայաստանյան գրասենյակը Հարավային Կովկասի տարածաշրջանային գրասենյակներից մեկն է, այն իրականացնում է Հայաստանին վերաբերող ծրագրերը Թբիլիսիի տարածաշրջանային գրասենյակի հովանու ներքո:

Հարավային Կովկասում ՖԷՀ-ը.

- ստեղծում եւ պահպանում է կապը ոչ միայն գործընկերների, այլեւ կառավարության, ակադեմիական, փորձագիտական շրջանակների, ՀԿ-ների, արհմիությունների, միջազգային կազմակերպությունների ու մամուլի եւ տարբեր ոլորտների կարեւոր դերակատարների հետ,

- մշակում, իրականացնում մի շարք ծրագրեր իր գերակա երեք ուղղություններով՝ տեղական եւ միջազգային գործընկերների հետ սերտ համագործակցու-թյան շնորհիվ,

- վերահսկում եւ վերլուծում է քաղաքական զարգացումները բոլոր երեք երկրներում՝ տեղական, գերմանական եւ եվրոպական փորձագետների, քաղաքական գործիչների, գործընկերների եւ շահագրգիռ հանրության լայնածավալ ցանցի ստեղծման նպատակով:

Հիմնական թեմաները.

- Մասնակցություն եւ ժողովրդավարություն
- Սոցիալական արդարություն, տնտեսություն եւ աշխատանք
- Խաղաղություն եւ անվտանգություն

Հոդվածի բովանդակության եւ նրանում արտահայտված կարծիքների համար պատասխանատվությունը կրում են հեղինակները:

Հրապարակումը պատրաստվել է Ֆրիդրիխ Էբերտ Հիմանադրամի Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ:

Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամի կողմից հրապարակված նյութերի կոմերցիալ օգտագործումը չի թույլատրվում: